ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՆԵՈԿՈՆՍԵՐՎԱՏԻԶՄԸ ԱՄՆ-ՈՒՄ

ԲԱԳՐԱՏ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

1970-ական թվականների կեսերից ի հայտ են գալիս ամերիկյան իմպերիալիզմի սոցիալ-քաղաքական ու գաղափարախոսական ստրատեգիայի ճգնաժամի խորացման նոր նշանները։ «Ավելի ու ավելի մեծ չափով են կորցնում իրենց արդյունավետությունը այն մեթոդները, որոնց օգնությամբ կապիտալիզմին հաջողվում էր ետպատերազմյան ժամանակաշրջանում պահպանել իր զարգացման հարաբերական կայունությունը,— նշվեց ՍՄԿԿ Կենտկոմի հունիսյան (1983 թ.) պլենումում։— Ավելի ու ավելի պարզ է դառնում. իմպերիալիզմը ընդունակ չէ հաղթահարելու իր խորությամբ ու մասշտաբներով աննախադեպ գիտատեխնիկական հեղափոխության սոցիալական հետևանքները... Իմպերիալիզմը խճճվել է ներքին ու միջպետական հակասությունների, ցնցումների, կոնֆլիկտների մեջ»[1]։

Արդի կապիտալիզմի հակասություններն ԱՄՆ-ում իրենց արտացոլումն են գտնում, մասնավորապես, բուրժուական քաղաքական փիլիսոփայության նորագույն երկու դիրքորոշումների՝ «նեոլիբերալիզմի» ու «նեոկոնսերվատիզմի» պայքարում։ Վերջինիս առանցքը բուրժուական դեմոկրատիայի ճգնաժամի հաղթահարման և հեղափոխական պրոցեսներին հակազդելու հարցերն են, կապիտալիզմի ու բուրժուական դեմոկրատիայի ապագայի պրոբլեմը։

1970—80-ական թվականների սահմանագծին պահպանողական սոցիալ-փիլիսոփայական ու քաղաքական սկզբունքների ազդեցությունը ամերիկյան բուրժուական հասարակական գիտակցության վրա շեշտակիորեն աճում է։ Բուրժուական սոցիոլոգներից շատերը, որոնք նախկինում առավել կամ պակաս հետևողականությամբ հանդես էին գալիս բուրժուական պետության սոցիալական ակտիվության, գիտատեխնիկական հեղափոխության պահանջներին համապատասխան սոցիալական ու քաղաքական լիբերալ բովանդակությամբ ռեֆորմների օգտին, առաջադրում էին բուրժուական դեմոկրատիայի «պրոգրեսիստական տրանսֆորմացիայի» գաղափարը, փաստորեն հրաժարվում են դրանցից։

«Նեոկոնսերվատիզմի» մասին վիճաբանություններն արևմտյան գրականության մեջ առ այսօր շարունակվում են։ Քաղաքական այդ փիլիսոփայության բովանդակության պրոբլեմը գտնվում է նաև սովետական հեղինակների ուշադրության կենտրոնում, քանի որ ուղղակիորեն առնչվում է արդի միջազգային իրադրությանը[2]։ Նշենք, որ «նեոկոնսերվատիզմը» բուրժուական դեմոկրատիայի նորագույն ճգնաժամի ու համաշխարհային հեղափոխական պրոցեսների, սոցիալիզմի աշխարհի զարգացման յուրահատուկ արձագանքն

---

1 *«ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի պլենումի նյութերը։ 14—15 հունիսի 1983 թ.», Երևան, 1983, էջ 27։*

2 *Տե՛ս* Мельвиль А. Ю. Социальная философия современного американского консерватизма. М., 1980; его же. Консерватизм и сдвиги в общественном сознании в США. Анализ американских оценок и прогнозов.—«США: экономика, политика, идеология», 1981, № 10; Бурлацкий Ф. М. Некоторые вопросы теории международных отношений.—«Вопросы философии», 1983, № 9.

է բուրժուական գիտակցության մեջ։ Այդ ուղղության ամերիկյան մեկնաբաններից մեկը՝ սոցիոլոգ Ն. Լասվելը «Քաղաքական սոցիոլոգիայի մասին» իր գրքում խոստովանում է. «...Մենք ներգրավված ենք գաղափարների պայքարի մեջ, բայց մենք դեռ չենք գտել մեր գաղափարները»[3]։

Փորձելով ի մի բերել 1970-ական թվականներին սոցիալ-քաղաքական պրոցեսների զարգացման արդյունքները և կանխատեսել ապագան, ամերիկյան սոցիոլոգները գալիս են այն եզրակացության, որ Միացյալ Նահանգները թևակոխել են մի փուլ, երբ ակնհայտորեն պակասում են նյութատեխնիկական հնարավորությունները, հատունանում են սոցիալական նոր կոնֆլիկտներ և, համապատասխանաբար, բարդանում է հասարակության քաղաքական ղեկավարումը։ «Միացյալ Նահանգները,— գրում է սոցիոլոգ Ջ. Պեչմանը Բրուկինգսի ինստիտուտից,— թևակոխեցին 80-ական թվականները՝ պաշարված աներևակայելի դժվարություններով, ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրանից դուրս»[4]։ Թվարկելով «կենսական» շատ պրոբլեմներ, որոնք ծառացել են Ամերիկայի առաջ, այդ սոցիոլոգն ընդգծում է, որ դրանց լուծման համար անհրաժեշտ է վերականգնել հավատը կառավարության նկատմամբ։

Հայտնի մեկնաբանները, տնտեսագետները, սոցիոլոգներն ու քաղաքագետները երկրի ներքաղաքական ու տնտեսական երևույթները դիտելով ռազմաստրատեգիական հնարավորությունների հետ միասին, «1980-ական թվականների համար մեծ ստրատեգիա» գրքում նշում են, որ ապագայում չի կարելի բացառել սոցիալական հակասությունների սրման հավանականությունը[5]։

Նոր տասնամյակում ամերիկյան քաղաքական կյանքի ճգնաժամային երևույթների ու անկայունության մասին են վկայում հասարակական կարծիքի ուսումնասիրությունները։ Ամերիկացիներն իրենց պրոբլեմների պատճառը համարում են իշխանությունների անձեռնահասությունը, պետական-քաղաքական մեխանիզմի խափանումը։ Երկրի պետական-քաղաքական հաստատությունները և, ամենից առաջ, պրեզիդենտական իշխանությունը, ավելի ու ավելի են հեղինակազրկվում։

1980 թ. պրեզիդենտական ընտրությունների նախօրյակին պրեզիդենտ Քարտերի տնտեսական քաղաքականությանը հավանություն չէին տալիս ամերիկացիների 83%-ը։ Նրանք, ըստ էության, չէին վստահում բուրժուական հիմնական կուսակցությունների ծրագրերին։ Ընտրությունների օրը քվեատուփերին մոտեցան ընտրելու իրավունք ունեցողների 52,3%-ը։ Դա նշանակում է, որ ամերիկյան 76 միլիոն ընտրողներ նախընտրեցին չմասնակցել պրեզիդենտի ընտրությանը։ Ռեյգանը պրեզիդենտ դարձավ՝ ստանալով ընտրողների 26,8%-ի ձայները։ Սոցիոլոգներն այդ երևույթն անվանում են «աբսենտեիզմ»։ Եթե նախկինում բուրժուական գաղափարախոսները դա բացատրում էին ընտրողների պասսիվությամբ, ապա այժմ բացատրում են ԱՄՆ քաղաքական համակարգի ճգնաժամով[6]։ Հասարակական կարծիքի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, եթե 1970-ական թվականների սկզբներին իշխանության հաստատությունների նկատմամբ իրենց անվստահությունն էր հայտնում ամերիկացիների 17%-ը, ապա տասնամյակի վերջին դա հասավ 40%-ի[7]։

Որո՞նք են, ըստ ամերիկյան սոցիոլոգների, պետական-մոնոպոլիստական համակարգի և բուրժուական դեմոկրատիայի արդի ճգնաժամի պատճառներն ու արտահայտությունները։ Տարբեր սոցիոլոգներ դրանք տեսական տարբեր խորությամբ են մեկնաբանում։ Դասակարգային մտածելակերպի նեղ շրջանակները բուրժուական հասարակական մտքի ներկայացուցիչներին թույլ չեն

---

[3] Lasswell N. D. On political sociology, Chicago, 1977, p. 347.

[4] Setting National Priorities: Agenda for the 1980' s. (Essays by Bosworth B. P., Braynt R. C., Krause L. B., et. al. Ed. by Pechman Wash.. 1980, p. 1.

[5] Grand Strategy for the 1980's. Wash., 1978, p. 81.

[6] Setting National Priorities, p. 54, 531.

[7] New York Times, 1979, July 17.

տալիս խորամուխ լինել երևույթների էության մեջ, բացահայտել բուրժուական հասարակության քաղաքական վերնաշենքի ճգնաժամի բուն պատճառները։ Այդուամենայնիվ, հաճախ կարելի է հանդիպել հետաքրքիր դիտողություններ, մանավանդ, որ վերջին տարիներս բուրժուական սոցիոլոգիայում նկատելիորեն սրվել է ներքին պայքարը, պայքարն այսպես կոչված արմատականների, լիբերալների և աջ-պահպանողական քաղաքական դիրքորոշում ունեցողների միջև։ Այդ պայքարի առանցքը պետության սոցիալական ակտիվության պրոբլեմներն են։

1950—60-ական թվականներին կապիտալիստական երկրների աշխատավորները կապիտալի դեմ մղած համառ պայքարում նկատելի հաջողություններ հասան՝ հատկապես սոցիալական ոլորտում։ Բարձրացավ ռեալ աշխատավարձի մակարդակը, բարելավվեցին աշխատանքի պայմանները, ընդունվեցին ապահովագրական որոշ ծրագրեր, որոնք ֆինանսավորվում էին պետական բյուջեների կողմից։ Բուրժուազիան այդ քայլին գնաց՝ ելնելով իր իսկ դասակարգային շահերից, այլ ոչ թե «հումանիստական նկատառումներից»։ Դա դպայի չափով պայմանավորված էր ՍՍՀՄ-ում սոցիալիստական շինարարության հաջողություններով, որոնք կապիտալիստական երկրների աշխատավորներին ցույց տվեցին, որ մարքսիզմ-լենինիզմի դասականների կողմից կանխագծված հեղափոխական վերափոխումները, շահագործման, աղքատության ու գործազրկության վերացումը կապիտալիզմի ոչ միայն տեսական, այլև գործնական այլընտրանքն են։ Բուրժուական գաղափարախոսներն ու սթափ մտածող քաղաքական գործիչները ստիպված եղան խորհել կապիտալիզմի հետագա զարգացման նոր ուղիների ու հնարավորությունների մասին։ Այդ պրոբլեմը առանձնահատուկ սրությամբ ծառացել էր դեռ 1930-ական թվականներին՝ «մեծ դեպրեսիայի» տարիներին։ Ընդսմին, բանը միայն տնտեսական ճգնաժամը չէր՝ չնայած դրա խորությանն ու երկարատևությանը։ Ճգնաժամի հետևանքով խիստ ակտիվացավ աշխատավորների դասակարգային պայքարը։ Այդ պայմաններում բուրժուական գաղափարախոսներն ու քաղաքական գործիչները հասկացան, որ կապիտալիզմի աշխարհում «մեծ դեպրեսիայի» տիպի տնտեսական ու սոցիալական ցնցումները սոցիալիզմի սոցիալ-տնտեսական ու քաղաքական նվաճումների ֆոնի վրա հղի են ծանր հետևանքներով և կարող են հանգեցնել կապիտալիստական համակարգի կործանմանը։ 1930-ական թվականների սկզբներից բուրժուական կառավարող շրջանները սկսեցին լայնորեն օգտագործել պետական իշխանության լծակները՝ տնտեսական դրությունը կայունացնելու, հակաճգնաժամային միջոցառումներ մշակելու և իրականացնելու համար։ Միջոցառումների այդ համակարգը ստացավ «պետական կարգավորում» անվանումը։ Էկոնոմիկայի մեջ պետական լայն և սիստեմատիկ միջամտության գաղափարախոսական հիմնավորումը 1920-ական թվականներին տվեց հայտնի տնտեսագետ Քեյնսը, որի «դեղատոմսերը» լայնորեն կիրառեց պրեզիդենտ Ֆ. Ռուզվելտն իր «Նոր կուրսում»։

1950—60-ական թվականներին ոչ միայն Ամերիկայի Միացյալ Նահանգներում, այլև զարգացած կապիտալիզմի մյուս երկրներում ձևավորվեց և գործում է պետական-մոնոպոլիստական կարգավորման բարդ ու ճյուղավորված մի մեխանիզմ, որը կապիտալի տնտեսական ու քաղաքական հզորության միավորման գլխավոր երաշխիքն է։ Փորձեր են արվում պլանավորել էկոնոմիկայի զարգացումն այն հաշվով, որպեսզի կենտրոնացված պետական կարգավորման միջոցով կանխվեն տնտեսական ճգնաժամերը, կարգավորվի զբաղվածությունը և այլն։

Հիմնվելով գիտատեխնիկական հեղափոխության հսկայական հնարավորությունների վրա, բուրժուական կառավարող շրջանները ներկայումս փորձում են բանվորական շարժման նկատմամբ բռնությունների քաղաքականությունը զուգակցել ռեֆորմիզմի հետ, սոցիալական խաղաղության հետ։ Մոնոպոլիստական բուրժուազիան իրեն հաշիվ է տալիս, որ կապիտալիզմի համար ամենամեծ վտանգը սոցիալիստական հեղափոխության սուբյեկտիվ գործոնների հասունության աստիճանն է։ Ուստի առանձնահատուկ դեր է հատկացվում սո-

ցիալական քաղաքականությանը, որի սուր ծայրն ուղղված է սոցիալիստական հեղափոխության սուբյեկտիվ գործոնների ձևավորման դեմ։ «...Քաղաքական տեսանկյունից,— հայտարարում է բուրժուական սոցիոլոգ Ռիթ Բյերգարդը,— սոցիալական քաղաքականության նպատակն այն է, որպեսզի հնարավորության պայմաններում լուծի, կամ էլ, ծայրահեղ դեպքում, սքողի հասարակության մեջ ծագող հակասություններն ու բախումները։ Քանի որ սոցիալական հակասությունները ծագում են գլխավորապես արտադրության մեջ... ապա լիովին ակնհայտ է, որ սոցիալական քաղաքականությունը մեծ հնարավորություններ չի կարող ընձեռնել գոյություն ունեցող հակասությունները չեզոքացնելու համար։ Եթե սոցիալական քաղաքականությունը երբեմն անվանում են «սոցիալիստական», ապա պատճառը միայն ծագումնաբանության մեջ է, որը ելնում է տերմինի առաջին մասից։ Պատմականորեն սոցիալական քաղաքականությունը սոցիալիզմի ուղղակի հակադրությունն է, այն ծագել է և իրականացվում է սոցիալիզմի դեմ պայքարի նպատակով՝ կապիտալիզմի որոշ, առավել աչքի զարնող հակասությունները մեղմելու միջոցով»[8]։

Քաղաքական նշված կուրսի կողմնակիցները դրա իրականացման հնարավորությունը կապում են կապիտալիստական էկոնոմիկայի բարելավման, պետական կարգավորման համակարգի հետ։ Ուստի տնտեսական ու սոցիալական քաղաքականությունը դիտվում է միասնության մեջ. էկոնոմիկայի պետական կարգավորումը կոչված է նյութական հիմք ստեղծել կենսամակարդակի որոշ բարձրացման, սոցիալական խոշոր մասշտաբի ծրագրերի իրականացման համար։ Իրենց հերթին, սոցիալական միջոցառումները դրական ազդեցություն են գործում տնտեսական զարգացման վրա. եկամուտների աճը ընդլայնում է սպառման առարկաների շուկան, իսկ առանց մասսայական շուկայի մասսայական արտադրությունն անհնար է։

Տնտեսական ու սոցիալական իրադրության կայունացման նպատակով պետական իշխանության համապատասխան լծակների օգտագործումն անխուսափելիորեն կապված է առանձին մոնոպոլիաների ազատության որոշ սահմանափակումների հետ՝ ի շահ ողջ կապիտալիստական դասակարգի։ Սակայն այդ կուրսը պաշտպանում է մոնոպոլիստական բուրժուազիայի այն մասը, որը, ուղղակիորեն կապված չլինելով սպառազինությունների մրցավազքի հետ, գտնում է, որ առանց պետության սոցիալական այդօրինակ ակտիվության կապիտալիզմը կկործանվի։ Դրա դեմ են հանդես գալիս աջ-պահպանողական ուժերը, որոնք պնդում են, թե էկոնոմիկայի պետական կարգավորումը սահմանափակում է ազատ մրցակցությունը, ջլատում է կապիտալիզմի զարգացման շարժիչ ուժերը։ Ուստի վերջիններս հանդես են գալիս բուրժուական պետության սոցիալական այն միջոցառումների դեմ, որոնք ուղղված են աշխատավորների կենսամակարդակի բարելավմանը։ Դրանցից Ջ. Ջիլդերն, օրինակ, իր «Հարստություն և աղքատություն» գրքում, որը ԱՄՆ-ի «մեծ մամուլը» հռչակեց «կապիտալիստական մանիֆեստ», գրում է. «Հարուստների դերը... ցածր դասակարգերին շմոռանալն է, այլ ոչ թե նրանց նկատմամբ առանձնահատուկ հոգածությունը... Հարուստները պետք է կապիտալ ներդնեն... Կապիտալիզմի համար նեղողություն խնդրելու փոխարեն ես իմ գրքով հավաստում եմ՝ կապիտալիզմն ամենաբարոյական սիստեմն է»[9]։

1929—1933 թթ. տնտեսական ճգնաժամն իր հետևանքներով լուրջ խթան հանդիսացավ պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացման համար։ Տնտեսական ու սոցիալական ոլորտներում իրականացվեցին լիբերալ բովանդակությամբ պետական միջոցառումներ, որոնց ակնառու օրինակն էր Ֆ. Ռուզվելտի «նոր կուրսը»։

Հետպատերազմյան առաջին տասնամյակները կապիտալիստական զարգացած երկրների մեծամասնության համար, ինչպես գտնում են բուրժուական

[8] The Welfare State in Crisis: An Account of the Conference on Social Policies in the 1980s 10 E CD. p., 1980, 20—23 October. p. 1981, p. 15.

[9] Gilder G. Wealth and Poverty, N. Y., 1981.

տնտեսագետներն ու սոցիոլոգները, տնտեսական ու սոցիալական «բացառիկ» զարգացման տասնամյակներ էին։ Տնտեսական զարգացման համեմատաբար բարձր տեմպերի շնորհիվ համապատասխանորեն աճում էր ազգային ամբողջական այն արդյունքը, որը բաժանում են դասակարգերը։ Դա հնարավորություն էր տալիս ինչ-որ չափով բարձրացնել աշխատավորների կենսամակարդակը, սոցիալական կարիքների համար զգալի միջոցներ առանձնացնել՝ առանց կրճատելու արդյունքի այն մասը, որը բաժին էր ընկնում բուրժուազիային։ Կապիտալիստական երկրների մեծամասնությունը պատերազմից հետո ընտրեց այդ ուղին։ Եվ հենց այդ տարիներին էր, որ բուրժուական գաղափարախոսներն ու քաղաքական գործիչները հռչակեցին «արևմտյան լիբերալ և դեմոկրատական ավանդույթների շրջանակներում համընդհանուր բարօրության պետության ձևավորումը»[10]։ Ինորոշելով այդ պետությունը, հայտնի տնտեսագետ ու սոցիոլոգ Ռ. Հեյլբրոնները «Ունի՞ արդյոք կապիտալիզմն ապագա» հոդվածում գրում է. «Խառը էկոնոմիկան կամ բարօրության պետությունը (ինչպես տնտեսագետները շուտով այն անվանեցին) բացահայտ կերպով ընդունում էր կառավարության՝ որպես տնտեսական աճի ռեղերվային շարժիչ ուժի և գործազրկությունից ու կարիքից փրկող գլխավոր օրգանի վրա իր հիմնված լինելը... Շնորհիվ նոր համակարգի կապիտալիզմը թևակոխեց իր տնտեսական զարգացման առավել հատկանշական ու երկարատև փուլը, որ երբևէ ապրել էր...»[11]։

Իրոք, զարգացած կապիտալիստական երկրներում 1950—60-ական թվականներին աշխատավորների դրության որոշ բարելավում նկատվեց։ Սակայն պրոպագանդիստական հայտարարությունները «համընդհանուր բարօրության պետության» ստեղծման մասին, որը իբրև թե փրկում է «ինդուստրիալ կապիտալիզմի սարսափներից և կարիքից», ապահովում է «աննախադեպ ծաղկում» և այլն, իրականությանը չեն համապատասխանում. տնտեսական արագ աճը «աննախադեպ ծաղկում» էր նշանակում ոչ թե աշխատավորների, այլ մոնոպոլիստական վերնախավի համար։ Աշխատավորները ստացան միայն այն, ինչ կարողացան նվաճել դասակարգային համառ պայքարում և ինչը տվյալ իրադրության մեջ բուրժուազիան հնարավոր համարեց զիջել։ Այդ տեսակետից կարևոր է նշել նաև համաշխարհային համակարգ դարձած սոցիալիզմի հարաճուն ազդեցությունը, որը լրջորեն անդրադարձավ կապիտալիստական երկրների ընդհանուր սոցիալ-քաղաքական իրադրության վրա։ Բուրժուական գաղափարախոսներն ամեն կերպ աշխատում են շրջանցել այդ փաստը։

1970-ական թվականներից կապիտալիստական տնտեսության զարգացումը խիստ դանդաղում է։ Կապիտալիզմը 1980-ական թվականներն է թևակոխում «մեծ դեպրեսիայից» հետո աննախադեպ տնտեսական ու սոցիալական ճգնաժամի պայմաններում։ Ճգնաժամը հանգեցրեց արտադրության զգալի անկման, գործազրկության և ինֆլյացիայի կտրուկ աճի, որոնք, բնականաբար, անդրադարձան աշխատավորների կենսամակարդակի վրա։ Արդեն 1970-ական թվականների կեսերից պարզ դարձավ, որ ի հայտ են եկել այնպիսի բացասական միտումներ, որոնք փոխում են կապիտալիստական տնտեսության զարգացման բուն բնույթը, խորն են ու երկարատև։ Գիտատեխնիկական առաջընթացի և աշխատանքի արտադրողականության աճի տեմպերը խիստ ընկան և հանգեցրին կառուցվածքային լուրջ փոփոխությունների։ Վերջիններս զգալի չափով խորացան ու բարդացան սպառազինությունների անսանձ մրցավազքի պայմաններում, մրցավազք, որը նախաձեռնել է ԱՄՆ՝ «համընդհանուր բարօրության պետությունը»։ Հսկայական ռազմական ծախսերը հետևյալ դինամիկան ունեն. եթե 1949 թվականին Միացյալ Նահանգների ռազմական բյուջեն 13,5 միլիարդ դոլար էր, 1963-ին՝ 79,6, 1977-ին՝ 104, 3, 1980-ին՝ 142,5, իսկ 1983-ին՝ 263, ապա 1984 թ. ֆինանսական տարում պա-

---

[10] The Welfare State in Crtsis, p. 14.

[11] Heilbronner R. L. Does Capitalism Have a future?—New York Times Magazine, 1982, August 15, p. 44.

տերազմական համակարգը կկլանի 280 միլիարդ դոլար կամ երկրի համախառն ազգային արդյունքի մոտ 10%-ը[12]։

Բուրժուական գաղափարախոսներից շատերը խուսափում են մեկնաբանել այդ տվյալները, չեն պատասխանում այն հարցին, թե ինչու են այդ հրսկայական անարտադրողական ծախսերը իրականացվում տնտեսական ու սոցիալ-քաղաքական ճգնաժամի պայմաններում։ Ռազմական ծախսերի թռիչքաձև աճը ուղեկցվում է բյուջեից կատարվող սոցիալական կարիքների համար հատկացումների կրճատումով, հարկերի բարձրացումով։ Եթե 1965 թ. բնակչությունից գանձվող եկամտահարկերը կազմել են 53,7 մլդ. դոլար, 1970 թ. 90,4, իսկ 1980 թ. 234,1 մլդ. դոլար, ապա 1983 թ. դրանք կազմեցին 297,7 մլդ. դոլար։ Նշված ժամանակաշրջանում պետական պարտքերը 323,3 մլդ. դոլարից հասել են 1 տրիլիոն 389 մլդ. դոլարի[13]։ «Բարօրության պետության շնորհիվ ձեռք բերված սոցիալական խաղաղությունը,— գրում է Ռ. Հեյլբրոնները,— ավարտվեց հուզումներով ու բախումներով։ Սոցիալական արդարության համը գրգռեց ախորժակները, բայց չբավարարեց դրանք»[14]։

Բուրժուական «բարօրության պետության» ճգնաժամին էր նվիրված 1980 թվականի հոկտեմբերին Միացյալ Նահանգների նախաձեռնությամբ Փարիզում հրավիրված զարգացած կապիտալիստական երկրների առաջատար տնտեսագետների, սոցիոլոգների ու քաղաքական գործիչների հատուկ կոնֆերանսը։ Վերջինիս նյութերը հրապարակվեցին «Բարօրության պետության ճգնաժամը» վերնագրով գրքում։

Գրքի առաջաբանում նշվում է, որ կոնֆերանսի հրավիրման պատճառը կապիտալիզմի տնտեսական ու սոցիալ-քաղաքական պրոբլեմների սրումն է, որի պայմաններում առանձնահատուկ նշանակություն է ստանում բուրժուական պետության սոցիալական քաղաքականության հեռանկարների հարցը։ Դրա հետ կապված, կոնֆերանսի նյութերում քննարկվում են սոցիալ-տնտեսական ու քաղաքական բազմապիսի պրոբլեմներ, էկոնոմիկայի և սոցիալական քաղաքականության հարցեր։

Ջ. Հասսը նշեց, որ «տնտեսական աճի դանդաղ տեմպերը նշանակում են, որ մենք չենք կարող խուսափել սոցիալական քաղաքականությունը վերակառուցելու անհրաժեշտությունից՝ պահպանելով միաժամանակ կարիքներից պաշտպանելու համար անհրաժեշտ մինիմումը։ Ժամանակակից արդյունաբերական տեսակետից զարգացած դեմոկրատիան պարտավոր է դա անել իր քաղաքացիների համար։ Եվ հարկավոր է ոչ թե կացին, այլ ինչ որ չափազանց հմուտ սոցիալական վիրաբուժություն»[15]։ Այստեղից էլ սոցիալական քաղաքականության քաղաքական ասպեկտը, այն ասպեկտը, որն անմիջապես առընչվում է «հասարակության մեջ իշխանության հարաբերությունների և անհատների ու դասակարգերի միջև հարստության բաշխման հետ»[16]։ «Երբ կձևակերպվի ապագա սոցիալական քաղաքականությունը,— հայտարարեց նեոլիբերալ Ռիթ Բյերգարդը,— ապա բացառիկ կարևոր նշանակություն կունենա այն բանի դիտակցումը, որ սոցիալական քաղաքականությունը և սոցիալական ապահովագրության համակարգը կապիտալիստական երկրներում գոյություն ունեն այն պատճառով, որ դրանք հասարակության մեջ խաղաղությունն ու կարգը պաշտպանելու առավել ընդունելի միջոցներն են։ Սոցիալական քաղաքականությունը զարգացած հասարակության հանգիստ, պլանաչափ գործունեությունն ապահովող ոչ միայն առավել ցանկալի ուղին է, այլև էժանագինը, եթե համեմատենք միակ ալտերնատիվի հետ. ավելի շատ ոստիկաններ, ավելի շատ բանտեր, ավելի շատ «օրենք և կարգ»։ Չնայած այն բանին, որ սո-

---

[12] Economic Report of the President. Transmitted to the Congress, Febr., 1983, Wash., 1983.

[13] Նույն տեղում, էջ 285։

[14] Heilbronner R. D. Does Capitalism Have a Future? p. 52.

[15] The Welfare State in Crisis, p. 6.

[16] Նույն տեղում, էջ 36։

ցիալական միջոցառումների օգնությամբ ձեռք բերված արդյունքները և ոստիկանական վերահսկողության արդյունքները քաղաքական տեսանկյունից կարող են և շատ չտարբերվել, այդուամենայնիվ, հսկայական տարբերություն կա դրանց հիմքում ընկած քաղաքական դիրքորոշումների միջև։ 80-ական թվականներին սոցիալական սեկտորի քաղաքական ֆունկցիան կլինի նույնը՝ «նշման և բռնության կազմակերպված օգտագործման ընդունելի երկընտրանքի ձևակերպումը»[17]։ Ուստի, եզրակացնում է Ռիթ Բյերգարդը, «երկյուղների պատճառները պետք է փնտրել ոչ այնքան տնտեսական, որքան քաղաքական ոլորտում։ Պետք է վախենալ ոչ թե սոցիալական քաղաքականության ծախքերից, այլ այն բանից, որ այդ քաղաքականությունը գործուն չի լինի»[18]։ Բուրժուական սոցիոլոգների այդ խոստովանություններն արժեքավոր են, քանի որ արվում են «ներսից» և արտացոլում են մոնոպոլիստական բուրժուազիայի տարբեր խմբավորումների միջև սրվող ներքաղաքական պայքարի միտումները։ Դրանք միաժամանակ վկայում են այն մասին, որ կապիտալիստական աշխարհի գաղափարախոսների ու քաղաքագետների հույսերը՝ կապված գիտատեխնիկական հեղափոխության հետ, չարդարացան։ Տեխնիկատնտեսական բուռն զարգացումը, որը հատուկ էր հետպատերազմյան առաջին տասնամյակներին, ծնեց սոցիալ-տնտեսական ու քաղաքական նոր սուր պրոբլեմներ։

Ամերիկյան լիբերալ-ռեֆորմիզմի անկարողությունն ու անհետևողականությունը 1970-ական թվականների վերջերին հող նախապատրաստեցին ծայրահեղ աջ-պահպանողականների հաղթանակի համար։ Համարելով, որ ճգնաժամի պատճառը լիբերալների սոցիալ-տնտեսական, ինչպես նաև արտաքին քաղաքականությունն է, պահպանողականները՝ Ռ. Ռեյգանի գլխավորությամբ, առաջադրում են իրենց ծրագիրը։ «Նեոկոնսերվատորների» ծրագիրը նույնպես ելնում է պետական-մոնոպոլիստական համակարգի ճգնաժամի փաստից։ Սակայն դրանից այլ հետևություններ են անում։ «Ռեյգանիզմը» («նեոկոնսերվատորների» ծրագիրը շուտով այդպես կոչվեց) ելնում է նրանից, որ պետք է լայն ձակատով հարձակվել աշխատավորների սոցիալական դիրքերի վրա։ Ընդ որում, այդ հարձակումը տեղի է ունենում երեք գլխավոր ուղղություններով։ Առաջին ուղղության համար բնորոշ է «սոցիալական կայունությունը պահպանելու համար կապիտալիզմի կողմից վճարվող քաղաքական գնի իջեցումը»։ Այդ նպատակով էլ խիստ կրճատվում են արդեն ընդունված սոցիալական ծրագրերը, որոնք էլ ավելի են վատթարացնում սոցիալական հիերարխիայի ամենաստորին աստիճանների վրա գտնվող խավերի դրությունը։ Երկրորդ ուղղությունը ամերիկյան արհմիությունների առանց այդ էլ թույլ դասակարգային դիրքերի վրա բացահայտ ճնշումն է, նրանց գործունեության սահմանափակումը։ Նշենք, որ 1980-ական թվականների սկզբներին ամերիկյան արհմիությունների մեջ էր ներգրավված աշխատավորների 19%-ը միայն (Անգլիայում արհմիությունների անդամներ են աշխատավորների 56%-ը, իսկ Շվեդիայում՝ 78%-ը)։ Վերջապես երրորդ ուղղությունն այն է, որպեսզի սոցիալական միջոցառումներն իրականացման տարբեր փուլերում տարբեր կերպ անդրադառնան աշխատավորների առանձին խավերի դրության վրա՝ հակադրելով նրանց միմյանց և դժվարացնելով համադեմոկրատական շարժման ձևավորումը։ Սոցիոլոգ Դ. Բրոդերն այդ կապակցությամբ նշում է, որ «վերջին քաղաքականության նպատակը «...ինդիվիդուալիստական բնազդների ուժեղացումն է»[19]։

Ելնելով պաշտոնապես հռչակված այն սկզբունքից, որ կառավարության սոցիալական ֆունկցիաները երբեք չպետք է «ուռճացվեն», «ռեյգանիզմը» ձգտում է ամերիկյան հասարակության վերնախավի բարգավաճման համար համապատասխան քաղաքական պայմաններ ապահովել։ Դա վերաբերում է,

---

[17] The Welfare State in Crisis, p. 36.

[18] Նույն տեղում, էջ 37։

[19] Broder D. S. Changing of the Guard: Power and Leadership in America, N. Y. 1980, p. 29.

նախ և առաջ, մոնոպոլիստական առաջատար միավորումներին, ինչպես նաև քաղաքացիների այն կատեգորիային, որի եկամուտները «միջինից բարձր են»։

«Նեոկոնսերվատորների» ծրագիրը, ինչպես իրավացիորեն գտնում են ամերիկյան առաջադեմ սոցիոլոգները, նպատակ է հետապնդում ամերիկյան բանվոր դասակարգին, երկրի բոլոր աշխատավորներին թելադրել «սոցիալական համաձայնագրի» աննախադեպորեն խիստ պայմաններ։ Ճնշման համար որպես միջոցներ են օգտագործվում ընդհանուր տնտեսական իրավիճակը, աճող գործազրկությունը, սոցիալական դեմագոգիան։ Ճիշտ է, այսօր, օրինակ, նույնիսկ ծայրահեղ հետադիմականներն ԱՄՆ-ում խուսափում են դատողություններ անել գործազրկության «օգուտի» մասին։ Սակայն փորձում են ապացուցել, որ գործազրկության պրոբլեմը ծագել է իրենց իսկ՝ աշխատավորների մեղքով և դեռևս չի դարձել «քաղաքական լուրջ պրոբլեմ»։ Մոտ 10% կազմող գործազրկությանը նպաստող գլխավոր գործոնը, ըստ «Նյուսուիկ» ամսագրի, այն է, որ «ամերիկյան բանվորական ուժի արժեքը համաշխարհային շուկայում թուլացնում է նրա մրցակցային դիրքերը։ Աշխատավարձը շատ ավելի բարձր է, քան բանվորների որակավորումը։ Եթե բանվորներն ուզում են վերադառնալ աշխատանքի, ապա պետք է անեն երկուսից մեկը. կամ բարձրացնեն իրենց որակավորումը, կամ էլ հաշտվեն ցածր աշխատավարձի հետ»[20]։ Ամերիկյան աշխատավորներն, այդպիսով, ավելի մեծ չափով, քան նախկինում, կախման մեջ են ընկնում կապիտալի և արտադրության հեռուն գնացող ինտերնացիոնալացման հետևանքներից։

Սոցիոլոգ Ռ. Լիկաչմենն իր «Ագահությունը բավական չէ. ռեյգանոմիկան» գրքում նշում է, որ աշխատավորների դիրքերի վրա կատարվող պահպանողականների ճակատային հարձակումը չի լուծում կապիտալիզմի ոչ միայն երկարաժամկետ, այլև կարճաժամկետ պրոբլեմները։ «1980 թվականի նոյեմբերին աշխատավարձով ապրող ամերիկացիներին առաջարկվեց կամ պաշտպանել մի պրեզիդենտի, որի կառավարումը զգալիորեն իջեցրեց ընտրողների եկամուտները ու աշխատանք ձեռք բերելու հնարավորությունը կամ էլ ընտրել այն թեկնածուին, որը գրավիչ ու պոզիտիվ լեզվով է խոսում»[21]։

ԱՄՆ-ի տիրապետող դասակարգի սոցիալ-տնտեսական քաղաքականությունը վերջին 15 տարիների ընթացքում նեղ, ուտիլիտար նպատակների հետ միասին հետապնդում էր ավելի հավակնոտ և հեռահար խնդիրներ՝ կապված աշխատավորների որոշակի խմբերի նյութական և գաղափարաքաղաքական կաշառման հետ։ Սոցիալական որոշակի խավերի կենսամակարդակի համեմատական բարձրացումը, «աղքատության դեմ պատերազմը», Լ. Ջոնսոնի կողմից հռչակված «մեծ հասարակության» ծրագիրը կոչված էին ցուցադրելու «արդի կապիտալիզմի փոխված դեմքը», վերջինիս «հոգատարությունը մարդու նկատմամբ» և այլն։ Այդ ստրատեգիայի խնդիրն այն էր, որպեսզի աշխատավորների կազմակերպված դասակարգային ելույթները մինիմումի հասցվեն։ Եվ պետք է ասել, որ այդ քաղաքականությունն ինչ-որ չափով տվեց իր արդյունքները։ Սակայն 1970-ական թվականների վերջերին պարզ դարձավ, որ նույնիսկ այդ սահմանափակ միջոցառումների իրականացման համար ամերիկյան կապիտալիզմն այլևս նյութական հնարավորություններ չունի։ Մյուս կողմից, տիրապետող դասակարգի առավել հեռատես ներկայացուցիչները չեն կարող չըգիտակցել, որ առանց հանրային միջոցառումների որոշակի մինիմումի հնարավոր չէ պահպանել բուրժուական հասարակության սոցիալ-քաղաքական կայունությունը։ Պահպանողական գաղափարախոսներից ոմանք Ռ. Ռեյգանին կոչ էին անում չմոռանալ կապիտալիզմի «երկարաժամկետ շահերը», քանի որ գիտակցում են, որ այսպես կոչված ազատ շուկան ի վիճակի չէ հանդես գալու որպես սոցիալական և տնտեսական կարգավորման արդյունավետ մեխանիզմ։ Չիկագոյի համալսարանի տնտեսագիտության պրոֆեսոր Ռ. Լուկասն,

---

[20] Newsweek, N. Y., 1982, Oct. 18, vol. 100, № 16, p. 38—40.

[21] Lekachmen R. Greed is not Enough: Reaganomics, N. Y., 1982, p. 11.

օրինակ, գտնում է, որ ամերիկյան էկոնոմիկան ավելի մեծ ուշադրություն է պահանջում իր ապագայի, քան ներկա վիճակի նկատմամբ։

«1970-ական թվականներին,— գրում է նա,— իշխանությունները բաղմիցս զոհաբերել են երկարաժամկետ նպատակներն այն բանի համար, որ ցույց տան, թե իբր տնտեսական գործերը լավ են գնում։ Բնական է, որ նման փորձերը որոշակի սահման ունեն»[22]։

Գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում արդյունաբերության կառուցվածքային փոփոխությունները էականորեն փոխում են բանվորական ուժի պահանջարկի բնույթը շուկայում, բաժանում են այդ շուկան երկու որակական մակարդակների։ Առաջին մակարդակի վրա որակյալ, հեղինակություն վայելող և բարձր վարձատրվող բանվորական տեղերն են, որոնք կապված են նոր և հեռանկար ունեցող ճյուղերի հետ։ Երկրորդ մակարդակի վրա այն տեղերն են, որոնք համարյա ոչ մի որակավորում չեն պահանջում, հեղինակություն չեն վայելում և ցածր են վարձատրվում։ Ըստ տնտեսագետների հաշվարկների, արդյունաբերության տեխնիկական վերազինման առաջին ալիքը, որը սկիզբ առավ 1950-ական թվականներին, կավարտվի 1980-ական թվականների կեսերին։ Եթե մինչև այդ տեղի չունենա նոր տեխնիկական պրոցեսների լայն ներխուժում արտադրության մեջ, ինչը քիչ հավանական է տնտեսական ճգնաժամի պայմաններում, ապա զգալի թվով մարդիկ զբաղված կլինեն ցածր վարձատրվող աշխատանքներով։ Բացի այդ, երկարատև կառուցվածքային գործազրկության հաղթահարումը, որը տվյալ իրադրության մեջ զուգակցվում է տնտեսական դանդաղ աճի ու ինֆլյացիայի հետ, շատ դժվար է լինելու և պահանջելու է արմատական քաղաքական լուծումներ։ Անգլիական բուրժուական ազդեցիկ ամսագրերից մեկը՝ «Էկոնոմիստը», այդ կապակցությամբ գրում է, որ ամերիկյան մոնոպոլիստական կապիտալը փորձում է հիշյալ պրոբլեմները լուծել՝ հաշվի չառնելով «համաշխարհային կապիտալիզմի ստրատեգիական շահերը»։ «Ֆինանսական հարցերում անպատասխանատու պրեզիդենտ Ռեյգանի գործողությունների հետևանքով», նշում է այդ ամսագիրը, կապիտալիստական ողջ աշխարհը կարող է կանգնել մի ճգնաժամի եզրին, որը կհիշեցնի 1929—1933 թթ. ճգնաժամը[24]։

Կապիտալիստական համակարգի շրջանակներում դա հնարավոր է անել միայն պետական կարգավորման նոր մեխանիզմների գործադրման պայմաններում, այսինքն այն ֆունկցիաների իրականացման պայմաններում, որոնք արդի բուրժուական հասարակության մեջ բնորոշ են միայն պետությանը։ Այդ տեսանկյունից, ինչպես նշում են ամերիկյան լիբերալները, նեոկոնսերվատորների ծրագիրը ներքուստ հակասական է, սոցիալականորեն ապակայունացնող և, որ ամենակարևորն է, քաղաքականապես պառակտում է հասարակությունը։ Ամերիկյան որոշ գաղափարախոսներ, խորհելով պետական-մոնոպոլիստական համակարգի զարգացման հեռանկարների մասին, խոստովանում են, որ գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում կառավարող շրջանների կողմից այսպես կոչված «միջին դասակարգի» կաշառման հավակնոտ էքսպերիմենտը ձախողվեց։ Ձախողվեց, որովհետև ոչ միայն չտվեց այնքան ցանկալի «դասակարգային խաղաղություն», այլև ծնեց մի ամբողջ շարք նոր պրոբլեմներ, որոնք էլ ավելի են բարդացնում այդ «խաղաղության» հաստատումը։ Դասակարգային հակասությունների սրման քաղաքական կոնկրետ հետևանքներն ամերիկյան սոցիոլոգները տարբեր կերպ են գնահատում։ Պրոֆեսոր Ռ.Լիկաշմենը, օրինակ, հիմնվելով Ու. Բերնհեմի կոնկրետ ուսումնասիրությունների վրա, ենթադրում է, որ Միացյալ Նահանգներում ձայնի իրավունք ունեցողների ավելի քան կեսը, որը չի մասնակցում ընտրություններին, պատկանում է սոցիալական այն խմբերին, որոնք Արևմտյան Եվրոպայի երկրներում «համակրում են ձախերին. սոցիալիստներին ու կոմունիստներին՝

[22] New York Times Magazine, 1979, Dec. 30, p. 15.

[23] Shackles on Growth in the Eighties; Fortune Forecast.—Fortune, N. Y., 1982, Oct. 4, vol. 206, № 7, p. 51.

[24] Economist, L., 1982, vol, 283, № 7236, p. 16, 19—20.

Ֆրանսիայում և Իտալիայում, լեյբորիստներին՝ Անգլիայում, սոցիալ-դեմոկրատներին՝ Ֆեդերատիվ Գերմանիայում և Շվեդիայում»։ Օբյեկտիվորեն դա նշանակում է, որ «քանի դեռ գաղափարական և կազմակերպչական առումներով ամերիկյան աշխատավորների շարժումը մնում է ներկա վիճակում, երբ ընտրողների 25—30%-ի ձայների ստացումը բավական է պրեզիդենտ դառնալու համար, ԱՄՆ-ի ներքաղաքական կյանքում անսպասելի շատ շրջադարձեր կարող են լինել»[25]։

Ինչպես տեսնում ենք, իր հիմքում էլիտարիստական քաղաքական փիլիսոփայությունն ունեցող ամերիկյան նեոկոնսերվատիզմի ծրագիրը բավականին սուր քննադատության է ենթարկվում նեոլիբերալների կողմից։ Նեոլիբերալները, սակայն, հաշվի չեն առնում այն փաստը, որ կապիտալիզմի քաղաքական համակարգը գործում է աշխատավորների ու նրանց քաղաքական կազմակերպությունների հետ մշտական դիմակայման պայմաններում։ Իր հավասարակշռությունը պահպանելու համար այդ քաղաքական համակարգն ավելի ու ավելի հաճախ է ստիպված լինում դիմելու այնպիսի միջոցների, որոնք կտրում են նրան նույնիսկ իր սեփական սոցիալական հիմքից։ Եվ բանը միայն տնտեսական ու սոցիալական միջոցառումներով չի սահմանափակվում։ Ուսումնասիրություններ են կատարվում այսպես կոչված «սոցիալական վերահսկողության տեխնոլոգիայի» համապարփակ մի համակարգ մշակելու ուղղությամբ։ Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Բ. Սկիներն, օրինակ, անհրաժեշտ է համարում յուրաքանչյուր անհատի մեջ ձևավորել «ճիշտ վարքագծի պայմանական ռեֆլեքսներ», հոգեբանական տեխնիկայի և բիոքիմիական դեղամիջոցների օգնությամբ ծրագրավորել «ապրումների ու վարքագծի օպտիմալ շաբլոններ»։ Այդ տեսակետից հատկանշական է, որ լիբերալներից շատերը, մատնանշելով ավտորիտար միտումներով ավանդական բուրժուադեմոկրատական արժեքների փոխարինումը, վկայակոչում են Ջորջ Օրուելի «1984 թվականը» պամֆլետը[26], որտեղ նկարագրված է կապիտալիզմին ու բուրժուական դեմոկրատիային փոխարինող տեխնոկրատական տոտալիտար երևակայական մի հասարակություն։ 1949 թվականին գրված այդ հակաուտոպիստական գրոտեսկի նպատակը, ինչպես հեղինակն էր նշում, արևմտյան հասարակությանը նախազգուշացնելն էր՝ գիտության և տեխնիկայի միջոցով տոտալիտար հասարակություն ստեղծելու վտանգից։ Հիմք ընդունելով Ջ. Բերնհեմի «Կառավարիչների հեղափոխությունը», Ջ. Օրուելը մտովի զարգացնում է այդտեղ առաջադրված տեխնոկրատական սկզբունքները՝ մինչև տրամաբանական անհեթեթության աստիճան։ Արդյունքում ստեղծվում է մի հասարակություն, որում միլիոնավոր մարդիկ, գործելով ինչպես ավտոմատներ, այդուամենայնիվ, համակերպվել են այդ դերի հետ, քանի որ տոտալ վերահսկողության համապարփակ մեխանիզմն այլ ընտրության հնարավորություն չի տալիս։ Մարդկային անհատականությունն Օրուելի հասարակության մեջ ճզմված-ոչնչացված է։ Այդ հասարակության կառավարողների համար գլխավորն այն է, որպեսզի արդյունաբերության զարգացումը չհանգեցնի «ռեալ հասարակական հարստության աճին»։ Դրա միակ միջոցը մշտական պատերազմական դրությունն է։ Պատերազմի հիմնական իմաստը ոչնչացնելն է. և ոչ միայն մարդկանց, այլև նյութական և հոգևոր կուլտուրայի արժեքները։ Պատերազմը այն նյութերի ոչնչացման միջոցներից է, որոնք մարդկային զանգվածներին կարող են օգտակար լինել և նպաստել նրանց ինտելեկտուալ զարգացմանը։ Պատերազմ վարելու միջոցների արտադրությունը մարդկային աշխատանքի ծախսման հեշտ եղանակ է։ Մարդուց այդ հասարակության մեջ պահանջվում է լինել նեղ մասնագետ, աշխատասեր, դյուրահավատ և տգեղ ֆանատիկոս՝ տոգորված վախով, ատելությամբ և քծնանքով։ Այլ կերպ ասած, դա մի հասարակություն է, որտեղ անհատի մտածելակերպը մաքսիմալ չափով հարմարեցված է պատերազմական դրությանը. նա պետք է համոզված լինի,

[25] Lekachmen R. Greed is not Enough: Reaganomics.—N. Y., 1982, p. 10.
[26] Orwell G. Nineteen Eighty Four. N. Y., 1962.

որ միջուկային պատերազմն անխուսափելի է և պետք է ավարտվի հաղթականորեն, որ ազատությունը ստրկություն է, իսկ տգիտությունը՝ ուժ։ Նոր զինատեսակների ստեղծման ուղղությամբ կատարվող աշխատանքներն անընդհատ շարունակվում են։ Դա մարդկային գործունեության այն հազվադեպ բնագավառն է, որտեղ «ստեղծագործ» միտքը կարող է իր կիրառությունը գտնել։ Տեխնիկական առաջընթացը իրականանում է մարդկային ազատության սահմանափակման հաշվին։ Նպատակն այն է, որպեսզի «նվաճվի երկրային ողջ տարածությունը և մեկընդմիշտ վերջ տրվի անկախ մտածողության հնարավորությանը»։ Այդ տեսանկյունից, բոլոր գիտնականները բաժանվում են երկու կատեգորիայի։ Առաջին կատեգորիային բնորոշ է «հոգեբանի և ինկվիզիտորի հիբրիդը», որը հանգամանորեն ուսումնասիրում է մարդկանց դեմքի արտահայտությունները, մշակում է թմրադեղեր, «թերապևտական շոկի եղանակներ», հիպնոզի և նյարդաֆիզիկական տանջանքների նուրբ մեթոդներ, որոնց միջոցով նա պետք է ներխուժի անհատի հոգեկանի մեջ։ Մյուս կատեգորիան ֆիզիկոսները, քիմիկոսներն ու կենսաբաններն են, որոնք մասնագիտանում են կյանքի ոչնչացմանն առնչվող բնագավառներում։ Եվ բոլոր այդ գիտնականներն աշխատում են «խաղաղության մինիստրությունում»։

Օրուելյան այս պատկերներն արտացոլում են լիբերալի մտավախությունը բուրժուական քաղաքական համակարգի զարգացման պահպանողականտոտալիտար միտումների նկատմամբ, ցույց են տալիս արդի կապիտալիզմի պաթոլոգիական բնույթը։ Պատահական չէ, որ «1984 թվականի» իր վերջաբանում հանրահայտ սոցիոլոգ է. Ֆրոմը գրում է, որ հենց կապիտալիզմն է մարդուն դարձնում «կոնֆորմիստական ավտոմատ»։ Միացյալ Նահանգներում, նշում է ամերիկյան սոցիոլոգը, արդեն իրականացել է «շատ քան այն ամենից, ինչ կանխատեսում էր Օրուելն իր գրքում»։ Օրուելը ըստ Ֆրոմի, նախազգուշացնում է այն մասին, որ, չնայած մարդու մեջ մարդկայինի ոչնչացումն այնքան էլ հեշտ և պարզ գործ չէ, այդուամենայնիվ, դա արդեն հնարավոր է դարձել այն միջոցների ու տեխնիկայի առկայության պայմաններում, որոնք իր տրամադրության տակ ունի արևմտյան բուրժուական հասարակությունը[27]։

Ամերիկյան նեոկոնսերվատորների էլիտարիստական քաղաքական փիլիսոփայության հիմնադրույթները, «ակտիվ» և «ուժեղ» պետության գաղափարները, տնտեսական ու սոցիալ-քաղաքական միջոցառումները, որ իրականացվում են ներկայումս Միացյալ Նահանգներում, դեմոկրատական հասարակայնությանը հիշեցնում են օրուելյան «1984 թվական»-ում նկարագրված հասարակությունը։ Եվ պատահական չէ, որ պահպանողականների համար հասարակական առաջընթացը ներկայանում է որպես բարոյական հիմքերից զուրկ, քայքայիչ մի ուժ։ Ժողովուրդը, աշխատավորները նրանց համար անդեմ մի զանգված են, ամբոխ, որը գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում կարող է դառնալ ձեռնածությունների օբյեկտ։ Այդ առումով, բուրժուական գիտակցության երկատվածության ուժեղացումը, լիբերալիզմի ու կոնսերվատիզմի պայքարն ԱՄՆ-ում գաղափարատեսական ու քաղաքական կարևոր նշանակություն ունի։ Դրա տեսական ակունքների ու կոնկրետ այն դրրսևորումների մարքսիստական-լենինյան վերլուծությունը, որոնք այս կամ այն կերպ առնչվում են գիտատեխնիկական հեղափոխությանը, վերստին հավաստում են իմպերիալիզմի քաղաքականության և գաղափարախոսության լենինյան վերլուծության անանց նշանակությունը։ «...Իմպերիալիզմը,— գրում էր Վ. Ի. Լենինը,— չի կասեցնում կապիտալիզմի զարգացումը և դեմոկրատական տենդենցների աճը բնակչության մասսայի մեջ, այլ սրում է հակամարտությունը այդ դեմոկրատական ձգտումների և տրեստների հակադեմոկրատական տենդենցների միջև[28]։ Լինելով այդ հակամարտության գաղափարախո-

---

[27] Fromm E. Afterword to „1984" by Orwell Gln: Orwell G. 1984.—N. Y., 1962, p. 257—267.

[28] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 30, էջ 126։

սական արտահայտությունը, ամերիկյան նեոլիբերալների ու նեոկոնսերվատորների պայքարը յուրովի է արտացոլում. այն փաստը, որ ներկայումս, ինչպես երբեք նախկինում, աճել է աշխատավորների հասարակական-քաղաքական ակտիվությունը։ Նրանք ընդունակ են ակտիվ և նպատակասլաց գործողություններով պաշտպանել դեմոկրատիայի, խաղաղության և սոցիալական առաջընթացի իրենց իրավունքը։

КРИЗИС БУРЖУАЗНОЙ ДЕМОКРАТИИ И НЕОКОНСЕРВАТИЗМ В США

БАГРАТ ГАРИБДЖАНЯН

Резюме

Одной из важнейших задач, поставленных июньским (1983 г.) пленумом ЦК КПСС перед советскими обществоведами, является марксистско-ленинский анализ особенностей и выявление тенденций развития современного этапа общего кризиса капитализма. С этой точки зрения актуальное теоретико-идеологическое и политическое значение имеет исследование новейших тенденций кризисного развития буржуазной демократии в США, выражением которого является идеология и политика наиболее реакционных кругов монополистического капитала — неоконсерватизм.

Борьба двух политико-идеологических позиций правящего класса относительно будущего капитализма — неолиберализма и неоконсерватизма — отражает сдвиги в американском буржуазном сознании на рубеже 1970-х — 80-х годов. Эта борьба вновь подтверждает непреходящее значение ленинского анализа проблем политической системы капитализма и буржуазной демократии в их взаимосвязи.